ԿԱՐԾԻՔ

Արայիկ Ֆիրյանի «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները (Արցախի օրինակով)» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Արայիկ Ֆիրյանի «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները (Արցախի օրինակով)» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեզը գիտական հետաքրքրություն է ներկայացնում և պահանջված հետազոտություն է, որն առաջին անգամ է իրականացվել Արցախում:

Ա. Ֆիրյանի ատենախոսությունն արժևորվում է իր գիտական նորույթով: Ատենախոսի կողմից սահմանվել են մի շարք եզրույթներ, որոնց վերաբերյալ տրվել են տեսամեթոդական ձևակերպումներ և մեկնություններ: Սահմանվել է «հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդել» եզրույթը, որի հասկացութային շրջանակը ներկայացվել է սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում, տրվել են եզրույթով նշանավորվող երևույթների՝ տարաբնույթ իրադրությունների հետ փոխկապակցված՝ շարժընթացի միտումները:

Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելը դրսևորվում է երկար ժամանակահատվածում արժեքային համակարգի վրա հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ազդեցության կուտակման և կենսակայունության ցուցանիշների միջոցով արտահայտման մեջ:

Հեղինակի կողմից շեշտադրվում է այն փաստը, որ այսօր, կապված Արցախի տարածաշրջանում մոլեգնող հակամարտությունների հետ՝ ազգաբնակչության հոգեկան առողջությունը վտանգող բացասական գործոնների, հուզական լարվածության մարմանն ուղղված հոգեախտորոշիչ ուսումնասիրությունները խիստ

հրատապ են և բառացիորեն միտված են տարաբնույթ հոգեբանական բացասական գործոնների նվազեցմանն ու սոցիալական վարքագծում և ընկալումներում ապակառուցողական սթրեսածին դրսևորումների կանխմանը:

Այս տեսանկյունից անձի, իսկ ավելի լայն իմաստով սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների առանձնահատկությունների ու յուրատիպությունների վերհանումն ու իմաստավորումը արդիական և հրատապ գիտական խնդիր է:

Հեղինակը կատարել է մեծածավալ հետազոտական աշխատանք թե մինչպատերազմական և թե հետպատերազմական շրջանում: Աշխատանքում ցույց են տրվել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների, կենսակայունության ցուցանիշների և արժեհամակարգի բաղադրատարրերի միջև առկա կապերը և փոխհարաբերությունները: Ատենախոսության մեջ փորձարարական ճանապարհով ապացուցվեց, որ հոգեբանական պաշտպանության որոշ մեխանիզմների դրսևորումները նպաստում են կենսակայունության մակարդակի բարձրացմանը, ինչն իր հերթին, արտահայտվում է արժեհամակարգում:

Արժեհամակարգի բաղադրատարրերը իրենց հերթին տարիների ընթացքում (հետազոտության առաջին և երկրորդ փուլ՝ մինչպատերազմական շրջան) հետք են թողնում նույն պաշտպանության մեխանիզմների վրա՝ էլ ավելի ուժեղացնելով դրանց հետագա ազդեցությունը շղթայի մյուս բաղադրատարրերի վրա:

Այսպիսով, ատենախոսը հանգել է այն եզրակացության, որ մինչպատերազմական փուլում Արցախում նախանշված սոցիալ-հոգեբանական իրավիճակի և տարիների ընթացքում սահմանամերձ գոտում գոյատևելու կուտակված փորձի պայմաններում ձևավորվում է հոգեբանական պաշտպանության համապատասխան մեխանիզմների մոդել, որն ուղղված է նպաստելու սոցիոմետ դիրքորոշումների զարգացմանն ու վարքագծի արտահայտմանը: Սահմանամերձ գոտում բնակվող արցախահայության հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն ազգաբնակչության կենսակայունության ընդհանուր պատկերի մաս են կազմում և, դոմինանտող կոնստրուկտների վերընթաց զարգացման պարագայում,

առանձնանում են արժեհամակարգում համապատասխան ցուցանիշների կումուլյատիվ դրսևորմամբ:

2015-2021 թթ. ընթացքում ատենախոսի կողմից անցկացված ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու այն մեխանիզմները, որոնք վկայում են ազգաբնակչության կենսակայունության մասին և առավել հաճախ են ներկայանում արժեհամակարգի բաղադրիչների շարքում: Այդ մեխանիզմների «գործառութային երկարակեցությունը» կրում է կումուլյատիվ բնույթ, քանի որ այդ մեխանիզմների արդիականությունը ձեռք է բերվում սահմանամերձ միջավայրում հոգեբանական պաշտպանության ձևերի ժամանակագրական կուտակման շնորհիվ, ինչի արդյունքում պաշտպանության մեխանիզմները ոչ միայն վերածվում են ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների, այլև՝ ամրապնդվում են արժեհամակարգում:

Ատենախոսության հիմքում դրված են հայերեն և օտարալեզու թվով 161 մասնագիտական աղբյուր: Աշխատանքը գրված է գրագետ, պահպանված են գիտական գրավոր խոսքին հատուկ արտահայտչամիջոցները:

Ատենախոսության դրական կողմերին և արժանիքներին անդրադառնալուց հետո, նշենք նաև որոշ դիտարկումներ, որոնց վերաբերյալ կարևորում ենք ատենախոսի կարծիքն ու մեկնաբանությունները.

1. Ատենախոսության երրորդ գլխում, հեղինակն օգտագործելով էմպիրիկ մեթոդների համալիր, ստացել է հետաքրքիր և արժանահավատ տվյալներ, սակայն դրանք ամբողջ ծավալով արտացոլված չեն հեղինակի կողմից կատարված եզրակացություններում: Եթե դա հնարավոր չէր տեխնիկական կամ ձևաչափային պահանջներից ելնելով, ապա այդ պարագայում, ցանկալի է, որ դրանց վերաբերյալ ներկայացված ընդհանրական վերլուծությունը լինի առավել ընդգրկուն:
2. Ա. Ֆիրյանի գրավոր խոսքը առանձին ձևակերպումներում խրթին է: Որոշ առաջնային մտքեր քողարկված են մասնագիտական տերմիններով, որոնք

պատշաճ կերպով չեն արտացոլում այդ դատողությունների բովանդակությունն ու էությունը: Ուստի, նպատակահարմար է ավելի պարզ ու միանշանակ ներկայացնել որոշ դրույթներ: Այդպիսի մոտեցումը էլ ավելի կարժեորի աշխատանքը և կդարձնի այն առավել շահեկան:

3. Ատենախոսության մեջ հղումները պատշաճ են, բայց ցանկալի է հղումների մեջ հստակ նշել այն էջերը, որտեղից մեջբերումները վերցված են:
4. Աշխատանքում զետեղված գծապատկերներից ու աղյուսակներից մի քանիսը ընկալման դիտանկյունից հանրամատչելի չեն: Վերջիներիս բովանդակության ըմբռնումը կարող է դժվարին խնդիր դառնալ հատկապես նրանց համար, ովքեր հետաքրքրված են գիտության տվյալ բնագավառով, սակայն ոլորտի մասնագետ չեն: Ուստի, դրանց վերաբերյալ հավելյալ պարզաբանումներն ու մեկնությունները ավելորդ չեն լինի:

Եզրակացություն

Այդուհանդերձ, վերոնշյալ թերությունները չեն ազդում Արայիկ Ֆիրյանի «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները (Արցախի օրինակով)» վերտառությամբ ատենախոսության գիտականության վրա և չեն նսեմացնում ամբողջ աշխատանքի գիտական կշիռը: Կարևոր է նշել, որ աշխատանքի արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ նշանակություն:

Արա Ֆիրյանի կողմից ներկայացված «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները (Արցախի օրինակով)» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, գիտական բարձր մակարդակով գրված աշխատանք է:

Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Աշխատանքի հեղինակը՝ Արա Ֆիրյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն

(միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական,խմբային գործունեություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական հոգեբանական գիտությունների դոկտոր,
ընդիմախոս պրոֆեսոր Սեդրակ Աղասու Սեդրակյան

Սեդրակ Աղասու Սեդրակյանի ստորագրությունը հաստատում եմ՝
գիտքարտուղար՝ Ա.Վարդանյան

03.09.2021թ.